Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 01-07-2022 թ. որոշմամբ
««ԱՐՄԵՆԻԱ ԹՐԻ ՓՐՈՋԵՔԹ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2021 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԱՐՄԵՆԻԱ ԹՐԻ ՓՐՈՋԵՔԹ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՇԵՆԳԱՎԻԹ ՇԵՆԳԱՎԻԹ ԹԱՂԱՄԱՍ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՊՈՂՈՏԱ 57/5
1.3 Պետական գրանցման համարը		222.160.00220
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2003-11-17
1.5 ՀՎՀՀ-ն		02554563
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)77617733
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.armeniatree.org
1.8 Էլեկտրոնային փոստը		yerevan@armeniatree.org
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Ջինմարի Փափելյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	71	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Համայնքային և անտառային ծառատունկ, բնապահպանական կրթություն	425,432,261
	Կանաչ համայնք ,դիմակայուն ապագա	164,637,740
	Կանոնադրական նպատակներով	1,525,000
	Գետերի ափամերձ տարածքների վերականգնում Հայաստանում	44,501,820

Digitally signed by
GEVORGYAN ANNA
6207710242
Date: 2022.07.01
18:22:34 AMT

	Տնկիր գաղափար, տնկիր ծառ	2,202,752
	Ապրանքի վաճառք և ծառայությունների մատուցում	16,142,100
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Կանոնադրական նպատակներով	847,000
	Ապրանքի վաճառք և ծառայությունների մատուցում	4,000,600
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	համակարգչ.տեխն.	477,688
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Համայնքային և անտառային ծառատունկ, բնապահպանական կրթություն	446,129,355	
Կանաչ համայնք ,դիմակայուն ապագա	93,001,984	
Գետերի ափամերձ տարածքների վերականգնում Հայաստանում	44,501,820	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	583,633,159	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	583,633,159	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 32 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

«ԱՐՄԵՆԻԱ ԹՐԻ ՓՐՈՋԵՔԹ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

2021թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երևան-2022

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն..... 3

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն..... 6

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն..... 7

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն..... 8

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 9

2021թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 10

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ
Երևան, Գյուլբենկյան 30/3, գրասենյակ 129
Հեռախոս՝ +374 10 229021, +374 60 529021
Էլ. փոստ՝ office@anaudit.am

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են՝ առ 31 դեկտեմբերի 2021թ. ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը, դրամական հոսքերի մասին հաշվետվությունը և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթների ամփոփագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ այս եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում նկարագրված հարցերի ազդեցության, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում «Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական հիմնադրամի առ 31 դեկտեմբերի 2021թ. ֆինանսական վիճակը և այդ ամսաթվին ավարտվող տարվա գործունեության արդյունքներն ու դրամական հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ-ներ) համապատասխան:

Վերապահումով կարծիքի հիմք

Հիմնադրամը երկու այլ համաշնորհառուների՝ «Ջինիշյան հիշատակի» հիմնադրամի և «Էներգետիկայի հայկական գործակալություն» հիմնադրամի (այսուհետ՝ Այլ համաշնորհառուներ) հետ համատեղ Եվրոպական հանձնաժողովից ստացել են դրամաշնորհ՝ իրականացնելու համար «Կանաչ համայնք՝ դիմակայուն ապագա» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ 2020թ. դեկտեմբերին կնքված NEAR-TS/2020/421-389 դրամաշնորհի պայմանագրի համաձայն: Դրամաշնորհի պայմանագրով Հիմնադրամի վրա՝ որպես Ծրագրի կոորդինատորի՝ դրվել են լրացուցիչ պարտականություններ՝ մասնավորապես Ծրագրի շրջանակում Եվրոպական հանձնաժողովի հանդեպ հանդես գալ ոչ միայն իր, այլ նաև Այլ համաշնորհառուների անունից, այդ կարգավիճակում ստանալ դրամաշնորհի գումարները և Այլ համաշնորհառուներին փոխանցել իրենց հասանելիք գումարները, ինչպես նաև Այլ համաշնորհառուներից ստանալ Ծրագրի կատարման և դրամաշնորհի միջոցների ծախսման վերաբերյալ հաշվետվությունները, դրանք համախմբել իր իսկ հաշվետվությունների հետ և Եվրոպական հանձնաժողովին ներկայացնել համախմբված հաշվետվություններ: Մեր կարծիքով, որպես Ծրագրի կոորդինատոր (Դրամաշնորհի պայմանագրով օժտված իրավասությունների և պարտականությունների շրջանակում)՝ Հիմնադրամը հանդես է գալիս ընդամենը որպես միջնորդ օղակ՝ Այլ համաշնորհառուների և Եվրոպական հանձնաժողովի միջև: Հետևաբար՝ Հիմնադրամի միջոցով Եվրոպական հանձնաժողովից ստացված և Այլ համաշնորհառուներին փոխանցված դրամաշնորհը չի հանդիսանում Հիմնադրամի ստացած դրամաշնորհ և համապատասխանաբար Այլ համաշնորհառուներին վերագրված դրամաշնորհի հաշվին նրանց կողմից կատարված ծախսերը, չճանաչված եկամուտները, ստեղծած դրամական հոսքերը չեն հանդիսանում Հիմնադրամի ծախսեր, եկամուտներ և դրամական հոսքեր: Ուստի՝ նշվածները չպետք է ներառվեին Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններում, և եթե չներառվեին, ապա Հիմնադրամի՝

- *Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝* ընթացիկ ակտիվների կազմում չպետք է լիներ «Տրված համաշնորհներ» հոդվածը 18,678 հազար դրամ գումարով, և նույն գումարով պակաս կլիներ ընթացիկ պարտավորությունների կազմում «Եկամուտներին վերաբերող շնորհներ» հոդվածը, համապատասխանաբար ազդելով *Ընդամենը ընթացիկ ակտիվներ, Ընդամենը ակտիվներ, Ընդամենը*

ընթացիկ պարտավորություններ, Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ հանրագումարային հոդվածների վրա.

- *Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝* «Եկամուտներին վերաբերող շնորհներից եկամուտը» և «Գործառնական (ծրագրային) ծախսերը» պակաս կլինեին 14,636 հազար դրամով, ազդեցություն չթողնելով տարվա շահույթի վրա,
- *Դրամական հոսքերի մասին հաշվետվությունում՝ Գործառնական գործունեությունից դրամական հոսքերի կազմում* չպետք է լիներ *«Համաշնորհներ այլ կազմակերպություններին»* հոդվածը 33,315 հազար դրամ գումարով, և նույն գումարով պակաս կլիներ *Որպես շնորհ ստացված դրամական միջոցներ* հոդվածը:

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք)* և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների այս աուդիտի նկատմամբ կիրառելի անկախության և էթիկայի պահանջներին համապատասխան, և մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան: Մենք համոզված ենք, որ մեր ձեռք բերած աուդիտորական ապացույցները բավարար են ու համապատասխան, որպեսզի հիմք ապահովեն մեր վերապահումով կարծիքի համար:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի գործադիր ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար և այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը ղեկավարությունն անհրաժեշտ կհամարի էական անճշտություններից (թե՛ սխալի, թե՛ խարդախության արդյունքում առաջացող) զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հնարավորություն ընձեռելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ գործադիր ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարելու Հիմնադրամը, կամ դադարեցնելու դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը պատասխանատու է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակներն են՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում այն մասին, թե արդյոք ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալի հետևանքով առաջացող էական անճշտություններից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի գոյություն ունեցող էական անճշտությունը: Անճշտություններ կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն օգտագործողների՝ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև՝

- նույնականացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական անճշտության ռիսկերը, այդ ռիսկերից ելնելով նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են ապահովում մեր կարծիքի համար: Խարդախությունից առաջացող էական անճշտության չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալից առաջացողինը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության համակարգի մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների ու կից բացահայտումների հիմնավորվածությունը.
- եզրահանգում ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն կապված դեպքերի կամ պայմանների հետ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ առկա է էական անորոշություն, ապա մենք պետք է մեր աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդպիսի բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում, ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են ընդհուպ մինչև մեր աուդիտորի եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ պայմանները կարող են պատճառ հանդիսանալ, որ Հիմնադրամն այլևս չհամարվի անընդհատ գործող:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, և այն, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները պատկերում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու դեպքերն այնպես, որ ապահովվի ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգի նշանակալի թերությունների մասին:

Սույն անկախ աուդիտորի եզրակացության համար հիմք հանդիսացած աուդիտի պատասխանատու ղեկավարն է՝

Արթուր Հարությունյան

Տնօրեն, որակավորված աուդիտոր, ՀԳԳՀ՝ 2 20 0017

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ

Երևան

30 հունիսի 2022թ.

«ԷՅ-ԷՆ ԱՈՒԴԻՏ»
"ЭЙ-ЭН АУДИТ"
"A-N AUDIT"
01529594

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծան.	31.12.2021թ.	31.12.2020թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	6	314,282	286,454
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	7	58,417	55,262
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**372,699**	**341,716**
Ընթացիկ ակտիվներ			
Կենսաբանական ակտիվներ	8	305,590	253,200
Պաշարներ	9	268	236
Տրված ընթացիկ կանխավճարներ		9,172	3,581
Տրված համաշնորհներ	10	18,678	-
Հարկերի գծով ընթացիկ ակտիվներ		3,838	585
Դրամական միջոցներ	11	107,018	67,748
Այլ ընթացիկ ակտիվներ		-	3,000
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**444,564**	**328,350**
Ընդամենը ակտիվներ		**817,263**	**670,066**
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կուտակված շահույթ		630,746	610,631
Ընդամենը սեփական կապիտալ		**630,746**	**610,631**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	12	23,567	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**23,567**	**-**
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր		968	824
Շահութահարկի գծով պարտավորություն		409	477
Պարտավորություններ հարկերի և այլ պարտադիր վճարների գծով		-	176
Եկամուտներին վերաբերող շնորհներ	13	161,573	57,958
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**162,950**	**59,435**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**817,263**	**670,066**

Գործադիր տնօրեն Ջինմարի Փափելյանի կողմից լիազորված անձ՝ Կոորդինատոր

Ռուզաննա Առուստամյան

«ՔԵՅԷՄՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ լիազոր ներկայացուցիչ՝ Գլխավոր հաշվապահի պարտականությունները կատարող

Նարինե Հակոբյան

30 հունիսի 2022թ.

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծան.	2021թ.	2020թ.
Նվիրաբերությունից եկամուտ	15	426,726	429,601
Կենսաբանական ակտիվների «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից օգուտ (կորուստ)	8	176,682	64,359
Կենսաբանական ակտիվների սկզբնական ճանաչումից (ծլաճից)	8	45,582	68,547
Եկամուտներին վերաբերող շնորհներից եկամուտ	13	86,309	26
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	12	224	-
Գործառնական (ծրագրային) ծախսեր	16	(601,098)	(503,413)
Վարչական ծախսեր	17	(76,329)	(74,691)
Գնորդների հետ պայմանագրերից հասույթ	14	16,986	30,430
Վաճառքի ինքնարժեք	18	(22,258)	(29,054)
Այլ եկամուտներ		10,348	1,814
Այլ ծախսեր		(9,963)	(8,005)
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից զուտ կորուստ		(32,685)	(1,400)
Շահույթ (վնաս) նախքան շահութահարկով հարկումը		**20,524**	**(21,786)**
Շահութահարկի գծով ծախս		(409)	(978)
Շահույթ (վնաս) և ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար		**20,115**	**(22,764)**

Գործադիր տնօրեն Ջինմարի Փափելյանի կողմից լիազորված անձ՝ Կոորդինատոր

Ռուզաննա Առուստամյան

«ՔԵՅԷՄՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ լիազոր ներկայացուցիչ՝ Գլխավոր հաշվապահի պարտականությունները կատարող

Նարինե Հակոբյան

30 հունիսի 2022թ.

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կուտակված շահույթ	Ընդամենը Սեփական կապիտալ
Մնացորդն առ 1 հունվարի 2020թ.	**633,395**	**633,395**
Հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	(22,764)	(22,764)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2020թ.	**610,631**	**610,631**
Հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	20,115	20,115
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2021թ.	**630,746**	**630,746**

Գործադիր տնօրեն Ջինմարի Փափելյանի կողմից լիազորված անձ՝ Կոորդինատոր

Ռուզաննա Առուստամյան

«ՔԵՅԷՄՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ լիազոր ներկայացուցիչ՝ Գլխավոր հաշվապահի պարտականությունները կատարող

Նարինե Հակոբյան

30 հունիսի 2022թ.

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Նվիրաբերությամբ ստացված դրամական միջոցներ	425,432	428,303
Որպես շնորհ ստացված դրամական միջոցներ (Ծանոթ. 13)	213,714	57,958
Համաշնորհներ այլ կազմակերպություններին	(33,315)	-
Շնորհների հետ վերադարձ	-	(91)
Ծառայությունների մատուցումից մուտքեր	1,427	18,260
Տնկիների վաճառքից մուտքեր	18,520	11,054
Այլ մուտքեր	624	187
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(278,723)	(264,604)
Վճարումներ մատակարարներին և նրանց անունից	(195,272)	(130,847)
Վճարումներ տնկիների ձեռքբերման դիմաց	(3,286)	(5,219)
Վճարված հարկեր և այլ պարտադիր վճարներ՝ բացի շահութահարկից	(598)	(200)
Վճարված շահութահարկ	(477)	(501)
Այլ վճարումներ	(15,482)	(10,274)
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	**132,564**	**104,026**
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Հիմնական միջոցների և այլ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերումից ելքեր	(60,812)	(39,801)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	200	100
Ներդրումային գործունեությունից դրամական զուտ հոսքեր	**(60,612)**	**(39,701)**
Ընդամենը դրամական զուտ հոսքեր	**71,952**	**64,325**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով	(32,682)	(1,400)
Դրամական միջոցների մնացորդն առ 1 հունվարի	**67,748**	**4,823**
Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի	**107,018**	**67,748**

Գործադիր տնօրեն Ջինմարի Փափելյանի կողմից լիազորված անձ՝ Կոորդինատոր

Ռուզաննա Կոստամյան

«ՔԵՅԷՄՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ լիազոր ներկայացուցիչ՝ Գլխավոր հաշվապահի պարտականությունները կատարող

Նարինե Հակոբյան

30 հունիսի 2022թ.

2021թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Արմենիա Թրի Փրոջեքթ» Բարեգործական Հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) քաղաքացիների և իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարումների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն է, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական և այլ հանրօգուտ նպատակներ:

Հիմնադրամը ստեղծվել է 2003թ. նոյեմբերի 17-ին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Հիմնադրամի նպատակն է նպաստել գյուղատնտեսության զարգացմանը, բնապահպանության կարևորության գիտակցությանը, քաղաքականության զարգացմանը, երկրի բնության բարեկարգմանը: Հիմնադրամն ունի 4 տնկարան, որտեղ աճեցված տնկիներն այնուհետև անհատույց բաշխվում են համայնքային, անտառվերականգնման ծրագրերի ծառատունկերի շրջանակներում:

Հիմնադրամի

Անվանումը՝	«Արմենիա Թրի Փրոջեքթ» Բարեգործական Հիմնադրամ
Գրանցման համարը՝	222.160.00220
Գրանցման վկայականը՝	03Ա 061126
Գրանցման ամսաթիվը՝	17.11.2003թ.
Գտնվելու վայրը (փոստային հասցեն)՝	ք. Երևան, Արշակունյաց պող. 57/5
Իրավաբանական գրանցման հասցեն՝	ք. Երևան, Արշակունյաց պող. 57/5
Հարկ վճարողի հաշվառման համարը՝	02554563

Հիմնադրամի հիմնադիրներն են.

- ԱՄՆ քաղաքացի Սյուզան-Յ-Քլեյնը,
- ԱՄՆ քաղաքացի Լաուրա-Քրիստին Գոնոնեանը,
- Հայաստանի Հանրապետության քաղաքացի Արա Խանջյանը,
- Հայաստանի Հանրապետության քաղաքացի Անուշ Շարամբեյանը,
- Հայաստանի Հանրապետության քաղաքացի Արամ Շարամբեյանը,
- Հայաստանի Հանրապետության քաղաքացի Մանյա Շիրինյանը:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է չորս անդամից.

- Խորհրդի նախագահ՝ Քերոլին Մյուգար,
- Խորհրդի անդամ՝ Էնտոնի Ջոզեֆ Բարսամյան,
- Խորհրդի անդամ՝ Թոմաս Ջոն Գարաբեդյան,
- Խորհրդի անդամ՝ Ջուլիա Միրաք Քյու:

31 դեկտեմբերի 2021թ. դրությամբ աշխատակիցների ցուցակային թվաքանակը եղել է 74 հոգի (31 դեկտեմբերի 2020թ.՝ 68 հոգի):

2. Պատրաստման հիմքերը և ստորագրումը

2.1. <u>Հայտարարություն համապատասխանության մասին</u>

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին («ՖՀՄՍ») համապատասխան:

2.2. <u>Չափման հիմունքը</u>

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են չափման սկզբնական արժեքի հիմունքով,

բացառությամբ կենսաբանական ակտիվների, որոնք չափվում են «իրական արժեք՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումներ»-ով:

Իրական արժեքը սահմանվում է որպես գին, որը կստացվի շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվի վաճառքից կամ կվճարվի պարտավորությունների փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ:

ՖՀՄՍ 13-ը սահմանում է իրական արժեքների որոշման հիերարխիա, որն արտացոլում է իրական արժեքը ստանալու տարբեր եղանակների հարաբերական արժանահավատությունը.

(ա) Ակտիվ շուկա. գնանշվող գին (1-ին մակարդակ)

Դիտարկել ակտիվ շուկաներում նույնական ֆինանսական գործիքների համար գնանշվող գները:

(բ) Գնահատման մեթոդիկա դիտելի ելակետային տվյալների օգտագործմամբ (2-րդ մակարդակ)

Դիտարկել ակտիվ շուկաներում համանման ֆինանսական գործիքների համար գնանշվող գները կամ ոչ ակտիվ շուկաներում նույնական կամ համանման գործիքների համար գնանշվող գները, կամ օգտագործել գնահատման մեթոդներ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալները դիտելի են:

(գ) Գնահատման մեթոդիկա էական ոչ դիտելի ելակետային տվյալների օգտագործմամբ (3-րդ մակարդակ)

Օգտագործվում են գնահատման մեթոդներ, որոնցում օգտագործվող մեկ կամ ավելի էական ելակետային տվյալներ դիտելի չեն:

2.3. <u>Ներկայացման և ֆունկցիոնալ արժույթը</u>

ՀՀ ազգային արժույթը ՀՀ դրամն է, որը Հիմնադրամի ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար դրամը:

2.4. <u>Ստորագրումը</u>

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2022թ. հունիսի 30-ին Հիմնադրամի կոորդինատոր Ռուզաննա Առուստամյանի, որը հանդես է գալիս Հիմնադրամի գործադիր տնօրեն Ջինմարի Փափելյանի կողմից 06.10.2021թ. տրված լիազորագրի հիման վրա և Հիմնադրամի գլխավոր հաշվապահի պարտականությունները կատարող՝ «ՔԵՅԷՄՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ լիազոր ներկայացուցիչ Նարինե Հակոբյանի կողմից:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1. <u>Շնորհներ և նվիրատվություններ</u>

Պետական շնորհները Հիմնադրամին ռեսուրսների փոխանցման տեսքով պետության (պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու միջազգային կազմակերպությունների) կողմից տրամադրվող օգնություն են՝ Հիմնադրամի գործառնական գործունեությանը վերաբերող որոշակի պայմաններին անցյալում կամ ապագայում համապատասխանության դիմաց: Այլ՝ մասնավոր, ոչ պետական հաստատություններից, բարեգործական կազմակերպություններից ստացված շնորհները համանմանության սկզբունքով հաշվառվում են ինչպես պետական շնորհները: Սակայն, եթե ստացված միջոցներին (ռեսուրսներին) կից՝ Հիմնադրամի գործառնական գործունեությանը վերաբերող որոշակի, կոնկրետ պայմաններ առկա չեն (օրինակ՝ տրամադրվել են Հիմնադրամի ընդհանուր գործառնական, կանոնադրական նպատակներով օգտագործվելու համար), ապա միջոցների այդպիսի ստացումը չի դիտվում որպես շնորհ, այլ դիտվում է որպես նվիրաբերություն կամ նվիրատվություն՝ կախված այլ համապատասխան հանգամանքներից:

Շնորհները չեն ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրանց կից բոլոր պայմանները, և որ շնորհները ստացվելու են:

i. Ակտիվներին վերաբերող շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհները նրանք են, որոնց հիմնական պայմանն այն է, որ Հիմնադրամը գնի, կառուցի կամ այլ կերպ ձեռք բերի ոչ ընթացիկ ակտիվներ: Դրանք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ ոչ ընթացիկ պարտավորությունների կազմում և սիստեմատիկ հիմունքով ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Ոչ դրամային ակտիվի ձևով ստացված շնորհները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են անվանական արժեքով, իսկ նման արժեքի բացակայության դեպքում՝ գնահատված իրական արժեքով և սիստեմատիկ հիմունքով ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում կամ այդ ակտիվի սպառումից օգուտների առաջացմանը զուգընթաց:

ii. Եկամուտներին վերաբերող շնորհներ

Շնորհները, որոնք չեն դասակարգվում որպես ակտիվներին վերաբերող, համարվում են եկամուտներին վերաբերող: Դրանք ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես եկամուտ սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Հիմնադրամը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները:

iii. Նվիրատվություններ

Նվիրատվությունները և առանց կոնկրետ պայմանների տրված նվիրաբերությունները որպես եկամուտ են ճանաչվում դրանց ստացման (ստացման ենթակա դառնալու) պահին:

iv. Կենսաբանական ակտիվներին վերաբերող շնորհներ

Կենսաբանական ակտիվին վերաբերող ոչ պայմանական շնորհը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն և միայն այն դեպքում, երբ այն դառնում է ստացման ենթակա: Եթե «իրական արժեք՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումներ»-ով չափվող կենսաբանական ակտիվին վերաբերող շնորհը պայմանական է, ներառյալ, երբ շնորհը Հիմնադրամից պահանջում է չզբաղվել որոշակի գյուղատնտեսական գործունեությամբ, ապա Հիմնադրամը շնորհը ճանաչում է շահույթում կամ վնասում այն և միայն այն դեպքում, երբ բավարարված են շնորհին կցված պայմանները: Եթե շնորհի պայմանները թույլ են տալիս չվերադարձնել շնորհի մի մասը՝ ելնելով անցած ժամանակահատվածից, ապա Հիմնադրամը շնորհը ճանաչում է շահույթում կամ վնասում անցած ժամանակին զուգընթաց:

3.2. <u>Կենսաբանական ակտիվներ</u>

Կենսաբանական ակտիվն իրենից ներկայացնում է կենդանի բույս կամ կենդանի: Գյուղատնտեսական արտադրանքը Հիմնադրամի կենսաբանական ակտիվներից ստացված արտադրանքն է: Կենդանիները և բույսերն ընդունակ են կենսաբանական փոխակերպման: Փոխակերպման կառավարումը գյուղատնտեսական գործունեությունը տարանջատում է այլ գործունեությունից: Չկառավարվող աղբյուրներից արդյունքի ստացումը գյուղատնտեսական գործունեություն չէ: Նման կենսաբանական փոխակերպման կամ բերքահավաքի արդյունքում առաջացող որակի կամ քանակի փոփոխությունը չափվում և վերահսկվում է՝ որպես կառավարման սովորական գործառույթ:

Կենսաբանական փոխակերպումը հանգեցնում է ակտիվների փոփոխման՝ աճի (կենդանու կամ բույսի քանակի աճի կամ որակի բարելավման), դեգեներացիայի (կենդանու կամ բույսի քանակի նվազման կամ որակի վատթարացման) միջոցով, բազմացման (լրացուցիչ կենդանիների կամ բույսերի ստեղծման) միջոցով կամ գյուղատնտեսական արտադրանքի արտադրության:

Հիմնադրամի կենսաբանական ակտիվները ներառում են պտղատու, մշտադալար, դեկորատիվ տնկիներ և թփեր: Տնկիները չափվում են «իրական արժեք՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումներ»-ով:

Բերքատու կենսաբանական ակտիվների սահմանմանը բավարարող կենսաբանական ակտիվները հաշվառվում են որպես հիմնական միջոցներ, սակայն դրանց վրա աճող բերքը (արտադրանքը), մինչև բերքահավաքը, կիամարվի կենսաբանական ակտիվ, որը ենթակա է հաշվառման «Գյուղատնտեսություն» ՀՀՄՍ 41-ի համաձայն: Բերքատու են համարվում այն կենսաբանական ակտիվները՝ բույսերը, որոնք օգտագործվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունում, ակնկալվում է, որ կօգտագործվեն մեկից ավելի տարի և քիչ հավանական է, որ կվաճառվեն որպես գյուղատնտեսական արտադրանք:

Օգուտները կամ կորուստները, որոնք առաջանում են կենսաբանական ակտիվի՝ «իրական արժեք՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումներ»-ով սկզբնական ճանաչման պահին չափումից, ինչպես նաև հետագա վերաչափումից, ներառվում են այն ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, որում դրանք առաջացել են:

Տնկիների աճեցման հետ կապված ծախսումները՝ աշխատանքային, նյութական, կոմունալ և այլ վերադիր ծախսումներ, ծախսագրվում են դրանց տեղի ունենալուն զուգընթաց:

Հիմնադրամի բոլոր կենսաբանական ակտիվները սպառվող են: Սպառվող կենսաբանական ակտիվներն այն ակտիվներն են, որոնք պետք է հավաքվեն որպես գյուղատնտեսական արտադրանք կամ վաճառվեն որպես կենսաբանական ակտիվներ:

Այն դեպքում, երբ տնկիները որոշակի ժամանակի ընթացքում չեն բաշխվում (այսինքն՝ չեն տրամադրվում ծառատունկի, կանաչապատման և այլ կանոնադրական նպատակներով երրորդ կողմերին) և հավանական չի համարվում, որ ապագայում կբաշխվեն, դրանք վերադասակարգվում են որպես հիմնական միջոց (այլ հիմնական միջոցների կազմում)՝ ներառյալ կտրոնատու ծառերը:

3.3. <u>Գնորդների հետ պայմանագրեր և հասույթ</u>

Հասույթը ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամի սովորական գործունեությունից առաջացող եկամուտն է, այսինքն տնտեսական օգուտների ավելացումն է (ակտիվների ներհոսքի կամ աճի կամ պարտավորությունների նվազման տեսքով), որը հանգեցնում է սեփական կապիտալի աճի, բացառությամբ սեփական կապիտալում հիմնադիրների կողմից ներդրումների հետևանքով սեփական կապիտալի աճի: Հասույթ չի համարվում է պետական շնորհներից և նվիրատվություններից ստացված եկամուտը:

Գնորդների հետ պայմանագրերից հասույթը Հիմնադրամը ճանաչում է, երբ բավարարվում են կատարողական պարտականությունները: Կատարողական պարտականությունները գնորդի հետ պայմանագրում նախատեսված խոստում են՝ փոխանցելու որոշակի ապրանքներ կամ ծառայություններ գնորդին: Կախված կատարողական պարտականության բնույթից՝ այն կարող է բավարարվել կամ ժամանակ ինչ որ մի պահի, կամ էլ ժամանակի ընթացքում:

Հիմնադրամի սովորական գործունեության հասույթ բերող ուղղությունները, դրանց գծով կատարողական պարտականությունները և հասույթների ճանաչման պահերը նկարագրված են Ծանոթ. 14-ում:

Այնքանով, որքանով Հիմնադրամի կողմից կատարողականին համապատասխան ճանաչված հասույթը գերազանցում է գնորդի կողմից վճարված հատուցումը, Հիմնադրամը ճանաչում է «պայմանագրի ծով ակտիվ», իսկ եթե գնորդից ստացված հատուցման գումարն է գերազանցում կատարողականին համապատասխան ճանաչված հասույթը, ապա տարբերությունը ճանաչվում է որպես «պայմանագրի գծով պարտավորություն»: Գնորդից անվերապահ ստացման ենթակա հատուցումը առանձնացվում է պայմանագրի գծով ակտիվից և ներկայացվում է որպես դեբիտորական պարտք:

3.4. Շահութահարկ

Հիմնադրամն իրականացնում է բարեգործական գործունեություն հիմնականում անհատույց ստացված միջոցների հաշվին, սակայն վերջին տարիներին սկսել է իրականացնել նաև ձեռնարկատիրական գործունեություն՝ ծառայությունների վճարովի մատուցում և տնկիների վաճառք: Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության համաձայն՝ ոչ առևտրային կազմակերպությունների համար անհատույց ստացված ակտիվները եկամուտ չեն, իսկ դրանց հաշվին կատարված ծախսերը ծախս չեն, ուստի՝ Հիմնադրամը անհատույց ստացված միջոցների մասով հարկվող շահույթ չի ունենում: Ձեռնարկատիրական գործունեությունից կարող են առաջանալ շահութահարկով հարկման ենթակա գումարներ: Հատաձգված հարկեր չեն ճանաչվում՝ շատ աննշան լինելու պատճառով:

3.5. Հիմնական միջոցներ և այլ ոչ ընթացիկ ակտիվներ

Հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը ճանաչվում է որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Հիմնադրամ, և միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Հիմնական միջոցի միավորը որպես ակտիվ ճանաչելուց հետո հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է գնման գինը, ներառյալ՝ ներկրման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը, հանած առևտրային զեղչերը և արտոնությունները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսումները: Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքում ծախսումների ճանաչումը դադարեցվում է, երբ միավորը գտնվում է այն վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է, որպեսզի այն հնարավոր լինի օգտագործել ղեկավարության նախանշած նպատակներով:

Սկզբնական արժեքը ներառում է մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները: Այս ակտիվների մաշվածությունը ևս հաշվարկվում է, երբ դրանք դառնում են պատրաստ՝ իրենց նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցի միավորի օտարումից կամ դուրսգրումից առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի (եթե առկա են) և հաշվեկշռային արժեքի տարբերություն: Հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ներառվում է շահույթում կամ վնասում, երբ միավորն ապաճանաչվում է:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, ճանաչվում է հաշվեկշռային արժեքում, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարվում են ճանաչման չափանիշները: Այդ փոխարինված մասերի հաշվե-կշռային արժեքն ապաճանաչվում է: Պահպանման և ընթացիկ սպասարկման, վերանորոգման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարվելու ժամանակաշրջանում:

Ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով հաշվարկի գծային մեթոդը հիմնական միջոցի գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն, երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվի՝ ՖՀՄՍ 5-ի համաձայն որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու կամ որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբում ներառվելու և ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանց մաշվածությունը հաշվարկվում է առանձին:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

- Շենքեր, կառուցվածքներ 10-20 տարի
- Փոխանցող հարմարանքներ 5-15 տարի
- Տրանսպորտային միջոցներ 5-10 տարի
- Մեքենաներ և սարքավորումներ 1-10 տարի
- Արտադրատնտեսական գույք 1-8 տարի
- Այլ հիմնական միջոցներ 1-10 տարի

Հիմնադրամն ունի նաև որպես հիմնական միջոց դասակարգված պտղատու, դեկորատիվ և մշտադալար ծառեր և խաղողի վազեր, որոնց գծով մաշվածություն չի հաշվարկվում այն հիմնավորմամբ, որ դրանց մնացորդային արժեքը գերազանցում է սկզբնական արժեքը:

Անհատույց օգտագործմամբ ստացված շենքերի (շինությունների) և հողամասերի վրա կատարված կապիտալ ծախսումների օգտակար ծառայության ժամկետը գնահատված է 15-20 տարի:

Անհատույց օգտագործմամբ տրված ցանկապատի փշալարերի, հենասյուների ու փայտե ցցերի օգտակար ծառայության ժամկետը գնահատված է 10-20 տարի:

3.6. <u>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ</u>

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամական միջոցները, բանկերում բացված հաշվարկային հաշիվները, սկզբնապես մինչև երեք ամիս մարման ժամկետով կարճաժամկետ բանկային ավանդները:

3.7. <u>Արտարժութային գործարքներ</u>

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժութային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

3.8. <u>Պաշարներ</u>

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած մշակումն ավարտելու գնահատված ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ գնահատված ծախսումները: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը որոշվում է՝ կիրառելով «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» (ՖԻՖՈ) բանաձևը:

3.9. <u>Ֆինանսական գործիքներ</u>

(i) <u>Սկզբնական ճանաչումը և չափումը</u>

Հիմնադրամը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ այն դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնական ճանաչման պահին չափվում է իրական արժեքով՝ գումարած, այն դեպքում, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչման պահին անտոկոս կամ շուկայականից ցածր տոկոսով տրամադրած կամ ստացած փոխառությունները, երկարաժամկետ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերը չափվում են ոչ թե անվանական արժեքով, ոչ թե այդ պահին տրված կամ ստացված հատուցման չափով, այլ իրական արժեքով, որը որոշվում է դրանց գծով պայմանագրային ապագա դրամական հոսքերը զեղչելով՝ կիրառելով համապատասխան ժամկետայնության և ռիսկայնության գործիքների համար գերակշռող շուկայական տոկոսադրույքները: Սկզբնական չափման համար որոշված իրական արժեքի և տրված կամ ստացված հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ, երբ դա պետական շնորհի մաս է կազմում, որի դեպքում կիրառվում են «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ՀՀՄՍ 20-ով սահմանված մոտեցումները:

(ii) <u>Ապաճանաչումը</u>

Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն և միայն այն դեպքում, երբ՝

ա) ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (լրանում է ուժի մեջ լինելու ժամկետը). կամ

բ) այն փոխանցում է ֆինանսական ակտիվը, և փոխանցումը ստորև շարադրվածին համապատասխան որակվում է որպես ապաճանաչման պայմանները բավարարող:

Ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում, կամ ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է:

Գոյություն ունեցող փոխառուի և փոխատուի միջև նշանակալիորեն տարբերվող պայմաններով պարտքային գործիքների փոխանակումը պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նմանապես, գոյություն ունեցող ֆինանսական պարտավորության կամ դրա մի մասի պայմանների նշանակալի վերափոխումը (անկախ այն բանից, արդյոք այն վերագրելի է փոխառուի ֆինանսական դժվարություններին) պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում:

Մարված կամ այլ կողմի փոխանցված ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական պարտավորության մի մասի) հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ փոխանցված ցանկացած ոչ դրամական ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(iii) <u>Հետագա չափումը</u>

Հիմնադրամը, բացի դրամական միջոցներից, դեբիտորական և կրեդիտորական պարտքերից, այլ ֆինանսական ակտիվներ ու ֆինանսական պարտավորություններ չունի: Սկզբնական ճանաչումից հետո դրանք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, իսկ առավել հաճախ երբ դրանք կարճաժամկետ են, չափվում են անվանական գումարով:

3.10. <u>Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում</u>

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները վերանայվում են արժեզրկման համար, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ

դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարն ակտիվի կամ դրամաստեղծ միավորի իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքն ավելացվում է մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլիներին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

3.11. <u>Պահուստներ</u>

Պահուստը ճանաչվում է, երբ Հիմնադրամն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունն էական է, ապա պահուստի գումարն իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ակնկալվում է, որ կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Զեղչման դրույքն այն դրույքն է՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Զեղչման դրույքը չի արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները վերանայվում են և ճշգրտվում են՝ ընթացիկ լավագույն գնահատականն արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը հակադարձվում է: Պահուստն օգտագործվում է միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

3.12.<u>Աշխատակիցների հատուցումներ</u>

Աշխատակիցների հատուցումները ներառում են՝

a. Աշխատավարձը,
b. կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները, ինչպիսին է վճարովի տարեկան արձակուրդը, ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստը,
c. պարգևավճարները և այլ հավելումները,
d. բժշկական ապահովագրության վճարները:

Աշխատակիցների հատուցումների այն գումարը, որն ակնկալվում է վճարել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում աշխատակիցներից ստացված ծառայության դիմաց, ճանաչվում է՝ ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո, և բ) որպես ծախս, բացառությամբ, երբ որևէ ստանդարտով պահանջվում կամ թույլատրվում է այդ հատուցումների ներառումը որևէ ակտիվի ինքնարժեքի (սկզբնական արժեքի) մեջ: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների գումարը, ապա Հիմնադրամն այդ գերազանցումը ճանաչում է որպես ակտիվ (կանխավճարված ծախս) այնքանով, որքանով այդ կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների նվազման կամ դրամական միջոցների վերադարձի:

Հիմնադրամն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները՝ կուտակվող փոխհատուցելի բացակայությունների ձևով (ինչպիսին է վճարովի ամենամյա արձակուրդը) ճանաչում է, երբ աշխատակիցները մատուցում են ծառայություն, որն ավելացնում է ապագա փոխհատուցելի բացակայությունների նրանց իրավունքը: Կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափվում են այն լրացուցիչ գումարով, որը Հիմնադրամն ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

Հիմնադրամը պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչում է, երբ՝ ա) այն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք և բ) պարտականությունը կարող է արժանահավատորեն գնահատվել: Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը պարտականության կատարումից խուսափելու որևէ իրատեսական հնարավորություն չունի:

4. Գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է Հիմնադրամի ղեկավարությունից կատարել գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների գումարների վրա և հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների ու ծախսերի մեծության վրա: Գնահատումները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա՝ ներառյալ ապագա իրադարձությունների սպասումները, որոնք ողջամիտ են որոշակի հանգամանքներում: Այնուամենայնիվ, այս ենթադրությունների և գնահատականների վերաբերյալ անորոշությունը կարող է բերել այնպիսի հետևանքների, որոնք կպահանջեն հետագայում ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական փոփոխություններ:

4.1. Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային հնացածությունը (մաշվածությունը), հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցման: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Հիմնադրամը կանխատեսում է ստանալ օգուտներ: Հաշվի են առնված հետևյալ հիմնական գործոնները. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

4.2. Ակտիվների արժեզրկումը

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար Հիմնադրամը գնահատում է ակտիվների փոխհատուցվող գումարի հաշվեկշռային արժեքից նվազման հայտանիշները: Փոխհատուցվող արժեքն իրենից ներկայացնում է օգտագործման արժեքից և վաճառքի համար անհրաժեշտ ծախսերով նվազեցված ակտիվի իրական արժեքներից մեծագույնը: Եթե հայտնաբերվում են նվազման հայտանիշներ, հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող արժեքը: Նվազման չափը հաշվառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակահատվածում, որում նվազումը բացահայտվել է: Եթե պայմանները փոխվում են, և ղեկավարությունը որոշում է, որ ակտիվների արժեքն ավելացել է, արժեզրկման պահուստն ամբողջությամբ կամ մասամբ հակադարձվում է:

Ներկայումս գոյություն չունեցող անցյալ պայմանների ազդեցությունը վերացնելու և անցյալում գոյություն չունեցող, բայց ներկայումս առկա պայմանների ազդեցությունն արտացոլելու նպատակով անցյալ փորձը ճշգրտվում է ընթացիկ դիտելի տվյալների հիման վրա:

4.3. Հարկային օրենսդրություն

Հայաստանի Հանրապետությունում հարկային օրենսդրության համապատասխանությունը մեկնաբանությունների առարկա է հանդիսանում, որոնք կատարվում են հարկային մարմինների կողմից: Հիմնադրամի անորոշ հարկային վիճակը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում վերագնահատվում է ղեկավարության կողմից: Շահութահարկի գծով պարտավորությունները որոշվում են ղեկավարության կողմից այն չափով, որ չառաջանան հարկային մարմինների կողմից լրացուցիչ պահանջներ հարկերի գծով:

Գնահատականները հիմնված են հարկային օրենսդրության մեկնաբանությունների և ցանկացած հայտնի դատարանի կամ այդ հարցերի գծով իրավասու մարմնի որոշման վրա, որոնք ընդունվել են կամ էականորեն ընդունվել են մինչև հաշվետու ժամանակաշրջանը: Տուգանքների, հարկերի (բացի շահութահարկից) գծով պարտավորությունները ճանաչվում են հաշվետու ժամանակաշրջանում՝ պարտավորությունը լուծելու համար անհրաժեշտ ծախսումների գծով ղեկավարության լավագույն գնահատականի հիման վրա:

4.4. Կապակցված կողմերի հետ գործարքներ

Իր սովորական գործունեության ընթացքում Հիմնադրամն իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ: Հիմնադրամը կիրառում է մասնագիտական դատողություն կապակցված կողմերի բացահայտման ուղղությամբ: Գնահատումն իրականացնելու համար Հիմնադրամը պարբերաբար հետևում է հոգաբարձուների խորհրդի անդամների նշանակալի մասնակցությանն այլ կազմակերպությունների կապիտալում, ինչպես նաև վերլուծում է յուրաքանչյուրի հետ գործարքի ծավալները:

4.5. Կենսաբանական ակտիվներ

Կենսաբանական ակտիվների իրական արժեքը որոշելիս ղեկավարությունը կիրառում է մի շարք գնահատականներ և դատողություններ, որոնք վերաբերում են տնկիների պատրաստիության աստիճանի ու շուկայական արժեքների որոշմանը և զեղչման տոկոսադրույքի ընտրությանը:

Տնկիների շուկայական արժեքը որոշվում է Հայաստանի Հանրապետության մի շարք բուսաբուծական կազմակերպություններից և անհատներից ստացված պատրաստի տնկիների գների հիման վրա: Գները համադրելու նպատակով հաշվի են առնվում տնկիների պատրաստիության աստիճանը և զեղչի տոկոսադրույքը:

4.6. Հիմնական միջոցների մաշվածության և նորոգման ու սպասարկման ծախսերի դասակարգում

Հիմնադրամը հիմնական միջոցների մաշվածության և նորոգման ու սպասարկման ծախսերն ըստ ծախսային հոդվածների դասակարգելիս կիրառում է դատողություն՝ որպես վարչական ծախս հաշվառելով մաշվածության և նորոգման ու սպասարկման ընդհանուր ծախսերի 20%-ը:

5. Նոր կամ փոփոխված ՖՀՄՍ-ներ

5.1. Նոր կամ փոփոխված ստանդարտների և մեկնաբանությունների կիրառում

2021 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած և Հիմնադրամի կողմից կիրառված նոր կամ փոփոխված ստանդարտներ չկան:

5.2. Հրապարակված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ

Հրապարակված, սակայն սույն ֆինանսական հաշվետվություններով ծածկվող հաշվետու ժամանակաշրջանի համար դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտները բերված են ստորև: Այս ցանկն այն հրապարակված ստանդարտների և մեկնաբանությունների ցանկն է, որոնք Հիմնադրամի կանխատե-

սումներով կօգտագործվեն իր կողմից հետագայում: Հիմնադրամը մտադիր է ընդունել դրանք այն ժամանակ, երբ այդ ստանդարտներն ուժի մեջ կմտնեն:

- *«Պարտավորությունների ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգումը. փոփոխություններ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ում»* (հրապարակվել է 2020թ. հունվարի 20-ին) պարտադիր կիրառման ենթակա է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Սրանով հստակեցվել են անորոշ մարման (կատարման) ժամկետ ունեցող պարտավորությունների ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգման հետ կապված հարցեր: Չի ակնկալվում, որ ազդեցություն կունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա, քանզի հստակեցված մոտեցումը համընկնում է Հիմնադրամում կիրառվողի հետ:
- *«Հիմնական միջոցներ. մուտքեր նախքան նպատակային օգտագործումը» Փոփոխություններ ՀՀՄՍ 16-ում* (հրապարակվել է 2020թ. մայիսին) պարտադիր կիրառման ենթակա է 2022թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամ կիրառումը թույլատրելի է: Այս փոփոխություններով արգելվում է հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքից նվազեցնել այն մուտքերը, որոնք ստացվում են հիմնական միջոցի միավորը ղեկավարության մտադրություններին համապատասխան օգտագործվելու համար անհրաժեշտ վիճակի և վայր բերելու ընթացքում արտադրված արդյունքի վաճառքից: Այդ մուտքերը և դրանց հետ կապված ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Փոփոխություններով նաև հստակեցվում է, թե ինչ է նշանակում «ստուգել, թե արդյոք ակտիվն աշխատում է պատշաճորեն». այն է՝ «գնահատել, թե արդյոք ակտիվի տեխնիկական և ֆիզիկական կատարողականն այնպիսին է, որ այն կարող է օգտագործվել արտադրությունում կամ ապրանքների առաքման, կամ ծառայությունների մատուցման մեջ, կամ այլոց վարձով տալու համար, կամ վարչական նպատակներով:

  Փոփոխությունները կիրառվում են հետընթաց, բայց միայն հիմնական միջոցների այն միավորների նկատմամբ, որոնք նպատակային օգտագործման համար պատրաստ են դարձել ներկայացվող ամենավաղ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո: Սկզբնական կիրառման կուտակային ազդեցությունը պետք է ճանաչվի որպես չբաշխված շահույթի (կամ սեփական կապիտալի այլ համապատասխան հոդվածի) սկզբնական մնացորդի ճշգրտում ներկայացվող ամենավաղ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ:
- *«Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանումը» Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում* (հրապարակվել է 2021թ. փետրվարին) պարտադիր կիրառման ենթակա է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամ կիրառումը թույլատրելի է: Այս փոփոխություններով «Հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունների» սահմանումը փոխարինվում է «Հաշվապահական հաշվառման գնահատումների» սահմանումով: Փոփոխություններով նաև հստակեցվում է, թե ինչպես զանազանել հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունը հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունից:

  Հիմնադրամը չի ակնկալում, որ այս փոփոխությունները, էական ազդեցություն կունենան իր ֆինանսական հաշվետվությունների վրա:
- *«ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ. 2018-2020թթ. ցիկլ»* (հրապարակվել է 2020թ. մայիսին) պարտադիր կիրառման ենթակա է 2022թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Փոփոխություններ են կատարվել հետևյալ ստանդարտներում.
    - *«Ֆինանսական գործիքներ» ՖՀՄՍ 9,*
    - *«Վարձակալություն» ՖՀՄՍ 16,*

- *«Գյուղատնտեսություն» ՀՀՄՍ 41,*
- *«ՖՀՄՍ-ների առաջին անգամվա որդեգրումը» ՖՀՍՄ 1:*

«Գյուղատնտեսություն» ՀՀՄՍ 41 – փոփոխությունը վերացրել է իրական արժեքով հաշվառման ժամանակ հարկերի գծով դրամական հոսքերը բացառելու պահանջը, ինչի արդյունքում *ՀՀՄՍ 41-Գյուղատնտեսություն* ստանդարտը համապատասխանեցվել է *ՖՀՄՍ 13 Իրական արժեքի չափում* ստանդարտի պահանջներին, այն է՝ հետևողականորեն կիրառել դրամական հոսքերը և զեղչման դրույքները, ինչը թույլ է տալիս ֆինանսական հաշվետվությունները պատրաստողներին որոշելու արդյոք առավել ճշգրիտ իրական արժեքի չափման ժամանակ կիրառել մինչև հարկումը դրամական հոսքերն ու զեղչման դրույքը, թե հարկումից հետո դրամական հոսքերն ու զեղչման դրույքը:

Փոփոխությունը ենթակա է կիրառման առաջընթաց, այն է՝ Հիմնադրամի կողմից իրական արժեքի չափման նպատակով փոփոխության առաջին անգամ կիրառման պահից սկսած:

Փոփոխությունը կիրառելի է 2022 թվականի հունվարի 1-ից սկսվող տարվա համար: Թույլատրելի է վաղաժամ կիրառումը:

Հիմնադրամը չի ակնկալում, որ այս փոփոխությունները, բացառությամբ *«Գյուղատնտեսություն» ՀՀՄՍ 41* ստանդարտի, էական ազդեցություն կունենան իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

6. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Շենքեր, կառուցվածք-ներ	Փոխանցող հարմարանք-ներ	Մեքենաներ և սարքավորում-ներ	Տրանսպոր-տային միջոցներ	Արտադրա-տնտեսական գույք
Արժեք					
Մնացորդ առ 01.01.2020թ.	107,678	6,015	35,686	108,896	130,893
Ավելացում	30,354	-	2,971	-	1,783
Նվազում	-	-	(1,660)	(2,500)	(444)
Մնացորդ առ 31.12.2020թ.	138,032	6,015	36,997	106,396	132,232
Մնացորդ առ 01.01.2021թ.	138,032	6,015	36,997	106,396	132,232
Ավելացում	31,252	353	1,834	18,077	439
Վերադասակարգումներ դեպի կենսաբանական ակտիվներ	-	-	-	-	-
Նվազում	-	-	(1,833)	-	(160)
Մնացորդ առ 31.12.2021թ.	169,284	6,368	36,998	124,473	132,511
Մաշվածություն					
Մնացորդ առ 01.01.2020թ.	23,209	3,640	25,744	55,818	124,046
Տարվա մաշվածություն	7,620	1,201	4,897	7,437	2,245
Նվազում	-	-	(1,660)	(1,771)	(410)
Մնացորդ առ 31.12.2020թ.	30,829	4,841	28,981	61,484	125,881
Մնացորդ առ 01.01.2021թ.	30,829	4,841	28,981	61,484	125,881
Տարվա մաշվածություն	9,445	891	4,678	8,100	1,523
Նվազում	-	-	(1,763)	-	(143)
Մնացորդ առ 31.12.2021թ.	40,274	5,732	31,896	69,584	127,261
Հաշվեկշռային արժեք					
Առ 31.12.2020թ.	**107,203**	**1,174**	**8,016**	**44,912**	**6,351**
Առ 31.12.2021թ.	**129,010**	**636**	**5,102**	**54,889**	**5,250**

2021թ. ընթացքում Հիմնադրամը չի հայտնաբերել իր հիմնական միջոցների արժեզրկում:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը չունի հիմնական միջոցների ձեռքբերման գծով որևէ էական պայմանագրային հանձնառություն:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի հիմնական միջոցների նկատմամբ սեփականության իրավունքի որևէ էական սահմանափակում առկա չէ:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Շենքեր, կառուցվածքներ»-ի կազմում ներառված են 25,086 հազար դրամ արժեքով դեռևս չավարտված (կառուցման մեջ գտնվող) և շահագործման համար ոչ մատչելի շինության վրա կատարված ծախսումները:

7. Այլ ոչ ընթացիկ ակտիվներ

Հազար դրամ	Անհատույց օգտագործ-մամբ ստացված շենքերի և հողամասերի վրա կատարված կապիտալ ծախսումներ	Անհատույց օգտագործման հանձնած	Ցանկապատի փշալարեր, ցցեր և հենասյուներ	Ընդամենը
Արժեք				
Մնացորդ առ 01.01.2020թ.	56,948	7,120	4,352	68,420
Ավելացում	-	-	5,917	5,917
Ներքին վերադասակարգումներ	7,899	-	(7,899)	-
Նվազում	(23)	-	-	(23)
Մնացորդ առ 31.12.2020թ.	64,824	7,120	2,370	74,314
Մնացորդ առ 01.01.2021թ.	64,824	7,120	2,370	74,314
Ավելացում	-	-	7,269	7,269
Ներքին վերադասակարգումներ	6,073	468	(6,541)	-
Մնացորդ առ 31.12.2021թ.	70,897	7,588	3,098	81,583
Մաշվածություն				
Մնացորդ առ 01.01.2020թ.	12,705	2,540	-	15,245
Տարվա մաշվածություն	3,097	710	-	3,807
Նվազում	-	-	-	-
Մնացորդ առ 31.12.2020թ.	15,802	3,250	-	19,052
Մնացորդ առ 01.01.2021թ.	15,802	3,250	-	19,052
Տարվա մաշվածություն	3,402	712	-	4,114
Մնացորդ առ 31.12.2021թ.	19,204	3,962	-	23,166
Հաշվեկշռային արժեք				
Առ 31.12.2020թ.	**49,022**	**3,870**	**2,370**	**55,262**
Առ 31.12.2021թ.	**51,693**	**3,626**	**3,098**	**58,417**

Այս հոդվածում ներկայացված 51,693 հազար դրամ (31.12.2020թ.՝ 49,022 հազար դրամ) գումարն իրենից ներկայացնում է Հիմնադրամի կողմից անհատույց օգտագործմամբ ստացված ք. Երևան, Արշակունյաց

պող. 57/5 հասցեում գտնվող գրասենյակի, Մարգահովիտ-Օհանավան կրթական կենտրոնի շենքի, ինչպես նաև ՀՀ մի քանի մարզերում Հիմնադրամի կողմից անհատույց օգտագործմամբ ստացված հողամասերի վրա կատարված կապիտալ ծախսումների գումարը, որոնք ամորտիզացվում են 15-20 տարի գնահատված օգտակար ծառայության ընթացքում, 3,626 հազար դրամը (31.12.2020թ.՝ 3,870 հազար դրամ) իրենից ներկայացնում է գյուղական համայնքներին անհատույց օգտագործմամբ հանձնած ցանկապատի փշալարեր, հենասյուներ ու փայտե ցցեր, որոնք ամորտիզացվում են 10-20 տարի գնահատված օգտակար ծառայության ընթացքում, իսկ 3,098 հազար դրամը (31.12.2020թ.՝ 2,370 հազար դրամ)՝ ցանկապատ կառուցելու և/կամ գյուղական համայնքներին անհատույց օգտագործմամբ հանձնելու համար պահվող շինանյութերը, որոնք չեն ամորտիզացվում:

8. Կենսաբանական ակտիվներ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը, ՀՀ 4 մարզերում գտնվող 4 տնկարաններում (2020թ. դեկտեմբերի 31-ին՝ նույնպես), ունի պտղատու, դեկորատիվ, մշտադալար և թփեր խմբերում դասակարգված տարբեր տարիքի և տեսակի 1,102,457 հատ (31.12.2020թ.՝ 1,091,757 հատ) տնկի:

Տնկիների կազմն ըստ տարիքի ներառում է 0-ից 4 տարեկանը, որոնք տնկելու համար պատրաստի դառնալուն պես օտարվում են՝ բաշխվելով ըստ ծառատունկի ծրագրերի: 2021թ. ընթացքում Հիմնադրամը բաշխել է 307,928 հատ տնկի (2020թ.՝ 441,446 հատ տնկի), որոնց օտարման պահին «իրական արժեք՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները» կազմել են 158,990 հազար դրամ (2020թ.՝ 137,745 հազար դրամ):

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի բոլոր տեսակի տնկիների միավորի համար միջինացված «իրական արժեք՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները» Միրաք տնկարանի համար կազմել է 150 դրամ (31.12.2020թ.՝ 164 դրամ), իսկ Կարին, Խաչփար, Չիվա տնկարանների համար՝ 1,049 դրամ (31.12.2020թ.-ին՝ 653 դրամ):

Ներքոնշյալ աղյուսակում ներկայացված են Հիմնադրամի կենսաբանական ակտիվներն ըստ խմբերի 31 դեկտեմբերի 2021թ. դրությամբ, որոնք չափված են իրական արժեքով.

Հազար դրամ

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Տնկարան Միրաքում	**-**	**-**	**141,519**	**141,519**
Դեկորատիվ	-	-	73,040	73,040
Պտղատու	-	-	68,479	68,479
Տնկարաններ Կարինում և Խաչփարում	**-**	**-**	**125,696**	**125,696**
Մշտադալար	-	-	86,559	86,559
Դեկորատիվ	-	-	15,353	15,353
Պտղատու	-	-	3,555	3,555
Թփեր	-	-	20,229	20,229
Տնկարան Չիվայում	**-**	**-**	**38,374**	**38,374**
Թփեր	-	-	507	507
Պտղատու	-	-	37,867	37,867
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	**-**	**-**	**305,589**	**305,589**

Ներքոնշյալ աղյուսակում ներկայացված են Հիմնադրամի կենսաբանական ակտիվներն ըստ խմբերի 31 դեկտեմբերի 2020թ. դրությամբ, որոնք չափված են իրական արժեքով.

Հազար դրամ

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Տնկարան Միրաքում	**-**	**-**	**151,596**	**151,596**
Դեկորատիվ	-	-	103,469	103,469
Պտղատու	-	-	48,122	48,122
Թփեր			5	5
Տնկարաններ Կարինում և Խաչփարում	**-**	**-**	**72,538**	**72,538**
Մշտադալար	-	-	43,277	43,277
Դեկորատիվ	-	-	8,662	8,662
Պտղատու	-	-	7,179	7,179
Թփեր	-	-	13,420	13,420
Տնկարան Չիվայում	**-**	**-**	**27,612**	**27,612**
Պտղատու	-	-	27,612	27,612
Խրամատավորված տնկիներ	**-**	**-**	**1,454**	**1,454**
Դեկորատիվ	-	-	1,247	1,247
Թփեր	-	-	207	207
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	**-**	**-**	**253,200**	**253,200**

Տարվա ընթացքում մակարդակների միջև տեղափոխություններ տեղի չեն ունեցել:

Կենսաբանական ակտիվների Մակարդակ 3-ում ներառված իրական արժեքների շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ

Տնկիներ	**2021թ.**	**2020թ.**
Մնացորդը հունվարի 1-ին	**253,200**	**294,555**
Ծլաճից կամ այլ կերպ գյուղատնտեսական գործունեությունից ստացված տնկիների մուտքագրում	45,582	68,547
Տնկիների ձեռքբերում	3,286	5,219
Տնկիների «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից օգուտ՝ պայմանավորված գնային կամ ֆիզիկական փոփոխությամբ	176,682	64,359
Տնկիների կորուստ	(23,869)	(41,735)
Գույքագրման արդյունքում առաջացած ավելցուկ	9,668	-
Տեղափոխություն հիմնական միջոցներից	30	-
Տնկիների վաճառք կամ օգտագործում գնորդների հետ պայմանագրերի շրջանակներում	(22,258)	(13,164)
Տնկիների տրամադրում ծառատունկերի ծրագրերի շրջանակներում	(136,731)	(124,581)
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	**305,590**	**253,200**

Տնկիների իրական արժեքը որոշելիս օգտագործվել են հետևյալ ոչ դիտելի ելակետային տվյալները.

Կենսաբանական ակտիվի բնութագիրը	31.12.2021թ. իրական արժեքը, հազար դրամ	Գնահատման մեթոդը	Ոչ դիտելի ելակետային տվյալները	Ոչ դիտելի ելակետային տվյալների սահմանաչափը	Ոչ դիտելի ելակետային տվյալների փոփոխությունների նկատմամբ իրական արժեքի չափման զգայունությունը
Տնկիներ	305,589	Շուկայական համադրելի մոտեցում	Շուկայական գին՝ միավոր տնկիի համար	125-9,000 դրամ	Որքան բարձր է շուկայական գինը, այնքան բարձր է իրական արժեքը
			Պատրաստիության աստիճան	10-100%	Որքան բարձր է պատրաստիության աստիճանը, այնքան բարձր է իրական արժեքը
			Զեղչի դրույք	9.64%	Որքան բարձր է զեղչի դրույքը, այնքան ցածր է իրական արժեքը

Կլիմայական և եղանակային պայմանները կարող են անբարենպաստ ազդեցություն թողնել տնկիների աճի արագության և որակի վրա: Հիմնադրամը չի ապահովագրում իրեն բնական տարերքներից: Ի պատասխան այդ ռիսկի՝ Հիմնադրամը, իր տեխնիկական զինվածության և մասնագետների գիտելիքների հաշվին, անհրաժեշտության դեպքում փորձում է լիարժեքորեն իրականացնել մի շարք գյուղատնտեսական աշխատանքներ, օրինակ՝ տնկիների պարբերական սրսկումներ, պարարտացում, այլ խնամք, ինչը կարող է նվազեցնել տնկիների անտեղի կորստի ռիսկը:

31 դեկտեմբերի 2021թ. դրությամբ Հիմնադրամը կենսաբանական ակտիվների ձեռքբերման գծով որևէ հանձնառություն չունի (31 դեկտեմբերի 2020թ. դրությամբ՝ նույնպես չունի):

9. Պաշարներ

31 դեկտեմբերի 2021թ. դրությամբ պաշարների կազմում ներառված է 268 հազար դրամի (31.12.2020թ.՝ 191 հազար դրամի) չափով վառելիք: Հաշվետու տարվա ընթացքում որպես ծախս ճանաչված պաշարները կազմել են 9,674 հազար դրամ (2020թ.՝ 6,798 հազար դրամ): Հաշվետու տարվա ընթացքում պաշարների արժեքի նվազում տեղի չի ունեցել:

31 դեկտեմբերի 2021թ. դրությամբ պաշարների սեփականության իրավունքի սահմանափակումներ չկան:

10. Տրված համաշնորհներ

Հաշվետու ամսաթվի դրությամբ այս հոդվածում ներառված են Եվրոպական հանձնաժողովի (EU) ֆինանսավորմամբ իրականացվող «Կանաչ համայնք՝ դիմակայուն ապագա» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Հիմնադրամի միջոցով նշված ծրագրի համաշահառու հանդիսացող գործընկեր համագործակցող ոչ առևտրային երկու այլ կազմակերպություններին փոխանցված գումարները, որոնց օգտագործման վերաբերյալ այդ կազմակերպությունների կողմից 31.12.2021թ. դրությամբ դեռևս չեն ներկայացվել ծախսման համապատասխան հաշվետվություններ:

11. Դրամական միջոցներ և ոչ դրամային գործարքներ

11.1. Դրամական միջոցներ

Հազար դրամ	Առ 31.12.2021թ.	Առ 31.12.2020թ.
Բանկային հաշիվներ՝ ՀՀ դրամով	5,796	202
Բանկային հաշիվներ՝ ԱՄՆ դոլարով	-	9,406
Բանկային հաշիվներ՝ Եվրոյով	101,131	57,958

Դրամարկղ՝ ՀՀ դրամով	91	182
	107,018	**67,748**

Նշված ամսաթվերի դրությամբ դրամական միջոցների օգտագործման որևէ սահմանափակում չկա:

Դրամական միջոցների հետ կապված պարտքային և արժութային ռիսկերկին Հիմնադրամի ենթարկվածությունը բացահայտված է Ծանոթ. 20-ում:

11.2. Ոչ դրամային գործարքներ

Հազար դրամ	**2021թ.**	**2020թ.**
Ոչ դրամային գործարքներ՝ կապված ներդրումային գործունեության հետ		
Հիմնական միջոցների՝ որպես նվիրաբերություն ստացում	478	670
	478	**670**

12. Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	**2021թ.**	**2020թ.**
Մնացորդը հունվարի 1-ին	**-**	**-**
Շնորհների ստացում (վերադասակարգված եկամուտներին վերաբերող շնորհներից)	23,791	-
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամտի ճանաչում	(224)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	**23,567**	**-**

13. Եկամուտներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	**2021թ.**	**2020թ.**
Մնացորդը հունվարի 1-ին	**57,958**	**117**
Շնորհների ստացում	213,714	57,958
Շնորհների հետ վերադարձ	-	(91)
Եկամուտներին վերաբերող շնորհներից վերադասակարգում ակտիվներին վերաբերող շնորհներ	(23,790)	-
Եկամուտներին վերաբերող շնորհներից եկամտի ճանաչում	(86,309)	(26)
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	**161,573**	**57,958**

Եկամուտներին վերաբերող շնորհներն իրենցից ներկայացնում են միջազգային բարեգործական կազմակերպություններից, այլ պետություններից ու կազմակերպություններից ստացված դրամաշնորհային միջոցները, որոնք ուղղված են Հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի ֆինանսավորմանը:

14. Գնորդների հետ պայմանագրերից հասույթ

Հազար դրամ	**2021թ.**	**2020թ.**
Տնկիների վաճառքից հասույթ	15,559	12,155
Ծառայությունների մատուցումից հասույթ	1,427	18,275
Ընդամենը	**16,986**	**30,430**

Հիմնադրամի սովորական գործունեության հասույթ բերող ուղղությունները, դրանց գծով կատարողական պարտականությունները և հասույթների ճանաչման պահերը նկարագրված են ստորև.

Հասույթ բերող գործունեության ուղղությունը	**Կատարողական պարտականությունը (ԿՊ)**	**ԿՊ-ի բավարարման ուղղությամբ առաջընթացի չափման մեթոդը**	**Հասույթի ճանաչման պահը**

Բնապահպանական ճամբարների կազմակերպում	Ճամբարի մասնակիցների՝ սովորաբար 20-հոգանոց թիմերի համար՝ • Բույսերի խնամքի և բնապահպանական թեմաներով դասընթացների ու գործնական պարապմունքների անցկացում տնկարանի տարածքում • Ուսումնական նյութերի տրամադրում • Կացարանով և սննդով ապահովում	Դասընթացի նախատեսված տևողության ընթացքում ժամանակային համամասնությամբ:	Ճամբարը սովորաբար տևում է մի քանի օր, և հասույթը գործնականում ճանաչվում է ճամբարի ավարտին:
Ծառատունկերի իրականացում / առանց հետագա խնամքի (մեկանգամյա) կամ խնամքով	• Հողի նախապատրաստում, տնկիների տրամադրում / կամ առանց տրամադրման և տնկում • Որոշակի ժամանակաշրջանի ընթացքում տնկիների խնամք	Առաջին ԿՊ-ն՝ բուն ծառատունկը բավարարվում է ժամանակի մի պահի, իսկ երկրորդը՝ խնամքը՝ ժամանակի ընթացքում:	Բուն ծառատունկի գծով՝ ծառատունկը ավարտելուց, իսկ խնամքի մասով՝ ժամանակային համամասնության հիմունքով:
«Կանաչ» արշավների կազմակերպում	Պայմանավորված ծրագրով արշավի անցկացում	Բավարարվում է ժամանակի մի պահի	Երբ ԿՊ-ն կատարված է
Տնկիների վաճառք	Տնկիների տրամադրում գնորդին	Բավարարվում է ժամանակի մի պահի	Երբ ԿՊ-ն կատարված է

15. Նվիրաբերությունից եկամուտ

Նվիրաբերությունից եկամուտն իրենից ներկայացնում է կապակցված կողմերից և այլ անձանցից առանց որոշակի կից պայմանների ստացված միջոցները՝ կանոնադրական նպատակներով օգտագործելու նպատակով:

16. Գործառնական (ծրագրային) ծախսեր

Հազար դրամ	**2021թ.**	**2020թ.**
Բնապահպանական կրթություն, Մարգահովիտ-Օհանավան կրթական կենտրոն	58,173	37,962
Համայնքային ծառատունկ ծրագիր (բացի տնկիների տրամադրումից)	171,442	166,605
Սոցիալական տնտեսական բնապահպանական զարգացում հանուն կայունության (անտառային ծառատունկ ծրագիր) (բացի տնկիների տրամադրումից)	125,157	132,530
Ծառատունկերի համար տրամադրած տնկիներ (Ծանոթ. 8)	136,731	124,581
Տնկիների կորուստ (Ծանոթ. 8)	23,869	41,735
	515,372	**503,413**
Ծրագրային այլ ծախսեր		
Եվրոպական հանձնաժողովի (EU) ֆինանսավորմամբ իրականացված «Կանաչ համայնք՝ դիմակայուն ապագա» դրամաշնորհային ծրագիր	40,862	-
Գերմանական Միջազգային համագործակցության ընկերության (GIZ) ֆինանսավորմամբ իրականացված «Գետերի ափամերձ տարածքների վերականգնում Հայաստանում» դրամաշնորհային ծրագիր	44,864	-
	85,726	**-**
Ընդամենը	**601,098**	**503,413**

Գործառնական (ծրագրային) ծախսերում (բացառությամբ՝ ծրագրային այլ ծախսերում) ներառված աշխատակիցների հատուցումների գծով ծախսերը 2021թ. կազմել են 229,726 հազար դրամ (2020թ.՝ 231,602 հազար դրամ), իսկ մաշվածության գծով ծախսերը 2021թ. կազմել են 24,025 հազար դրամ (2020թ.՝ 23,591 հազար դրամ):

Ծրագրային այլ ծախսերում ներառված աշխատակիցների հատուցումների գծով ծախսերը 2021թ. կազմել են 22,031 հազար դրամ (2020թ.՝ առկա չէ), իսկ մաշվածության գծով ծախսերը 2021թ. կազմել են 989 հազար դրամ (2020թ.՝ առկա չէ):

17. Վարչական ծախսեր

Հազար դրամ	**2021թ.**	**2020թ.**
Աշխատակիցների հատուցումների գծով ծախսեր	26,867	37,671
Պահպանության ծախսեր	19,800	17,760
Հիմնական միջոցների և այլ ոչ ընթացիկ ակտիվների մաշվածություն	5,156	4,946
Հիմնական միջոցների նորոգման և սպասարկման ծախսեր	696	633
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	8,190	4,973
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	2,448	2,109
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	5,658	1,919
Այլ ծախսեր	7,514	4,680
Ընդամենը	**76,329**	**74,691**

18. Վաճառքի ինքնարժեք

Վաճառքի ինքնարժեքում ներառված գումարներից 22,258 հազար դրամը (2020թ.՝ 13,164 հազար դրամը) իրենից ներկայացնում է վաճառված տնկիների արժեքը, իսկ 2020 թվականի մնացած գումարները վերաբերում են ՀՀ կառավարության 30.04.2020թ. N 642-Լ որոշմամբ հաստատված կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասնհինգերորդ միջոցառման շրջանակներում գետերի առափնյա հատվածներում ծառատնկման աշխատանքների նպատակով կատարված ծախսերին (որից 15,283 հազար դրամը՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ֆիզիկական անձանց կատարած աշխատանքներին):

19. Կապակցված կողմերի հետ գործարքներ

19.1. <u>Վերահսկողության փոխհարաբերություն</u>

Հիմնադրամը որևէ կազմակերպության կողմից չի վերահսկվում: Հիմնադրամի ղեկավարման բարձրագույն մարմինը Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է, որի կազմը ներկայացված է Ծանոթ. 1-ում:

19.2. <u>Ղեկավարության հատուցումները</u>

Հիմնադրամի առանցքային անձնակազմի գծով հատուցումները հետևյալն են.

Հազար դրամ	**2021թ.**	**2020թ.**
Աշխատակիցների հատուցումների գծով ծախսեր	27,735	25,539

19.3. <u>Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ</u>

Հազար դրամ	**Գործարքի գումար 2021թ.**	**Գործարքի գումար 2020թ.**	**Չմարված մնացորդ 2021թ.**	**Չմարված մնացորդ 2020թ.**
Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հետ՝				
Նվիրաբերության ստացում	-	-	-	-
Այլ կապակցված կողմերի հետ՝				
Դրամական միջոցների՝ որպես նվիրաբերության ստացում	426,248	428,106	-	-

Հիմնական միջոցների՝ որպես նվիրաբերություն ստացում	478	670	-	-

20. Ֆինանսական ռիսկերի կառավարման ուղղությունները

20.1.Ընդհանուր ակնարկ

Հիմնադրամը ենթարկված է ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող հետևյալ ռիսկերին՝

- պարտքային ռիսկ
- իրացվելիության ռիսկ
- շուկայական ռիսկ:

Սույն ծանոթագրությունում ներկայացվում է տեղեկատվություն՝ վերոնշյալ ռիսկերից յուրաքանչյուրին Հիմնադրամի ենթարկվածության մասին, այդ ռիսկերը չափելու և կառավարելու, ինչպես նաև կապիտալի կառավարման գծով Հիմնադրամի նպատակներն ու քաղաքականությունը: Հավելյալ թվային բացահայտումները ներառված են սույն ֆինանսական հաշվետվությունների տարբեր հատվածներում:

Հիմնադրամի ռիսկերի կառավարման ռազմավարության և ընթացակարգերի սահմանման ու վերահսկման ընդհանուր պատասխանատվությունը կրում է ղեկավարությունը:

Հիմնադրամը վերապատրաստումների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով ձգտում է ստեղծել կարգապահական և կառուցողական վերահսկողական միջավայր, որում բոլոր աշխատակիցները կհասկանան իրենց դերն ու պարտականությունները:

20.2. Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը վերաբերում է այն ռիսկին, որ կողմը՝ իր պայմանագրով սահմանված պարտակա-նությունների չկատարմամբ Հիմնադրամի համար կառաջացնի ֆինանսական կորուստ:

Պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ եղել է.

	Հաշվեկշռային արժեք	
	31.12.2021թ.	**31.12.2020թ.**
Դրամական միջոցներ (Ծանոթ. 11)	106,927	67,566
	106,927	**67,566**

20.3. Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Հիմնադրամը դժվարություններ կունենա այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության կառավարման հետ կապված Հիմնադրամի մոտեցումն է. որքան հնարավոր է ունենալ բավարար իրացվելի միջոցներ իր ֆինանսական պարտավորությունները ժամանակին կատարելու համար՝ ինչպես նորմալ, այնպես էլ լարված պայմաններում՝ առանց իր համբավը ռիսկի ենթարկելու և առանց անընդունելի վնասներ կրելու:

Հիմնադրամը կառավարում է իրացվելիության ռիսկը՝ շարունակաբար մոնիթորինգի ենթարկելով կանխատեսված և փաստացի դրամական հոսքերը, ինչպես նաև ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների մարման ժամկետներն իրար համապատասխանեցնելով:

20.4. Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ շուկայական գների փոփոխությունները, ինչպիսիք են արտարժույթի փոխարժեքները, տոկոսադրույքները, կազդեն Հիմնադրամի շահույթի կամ վնասի և ֆինանսական գործիքների արժեքների վրա: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է շուկայական ռիսկին ենթարկվածությունը պահպանել ընդունելի սահմաններում՝ միաժամանակ օպտիմալացնելով հատույցը:

ա) Արժութային ռիսկ

Հիմնադրամն իրականացնում է արտարժույթով արտահայտված գործարքներ, հետևաբար առաջացնում է արտարժույթի փոխարժեքի տատանումներին ենթարկվածություններ: Արտարժութային ռիսկին ենթարկվածությունները Հիմնադրամը չի կառավարում:

Հիմնադրամի արտարժույթով արտահայտված դրամային ակտիվների և դրամային պարտավորությունների հաշվեկշռային արժեքները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հետևյալն են՝ արտահայտված համապատասխան արժույթներով.

Հազար դրամ	**31.12.2021թ.**		**31.12.2020թ.**	
Ֆինանսական ակտիվ (պարտավորություն)	**EUR**	**USD**	**EUR**	**USD**
Դրամական միջոցներ	101,131	-	57,958	9,406
Արտարժութային զուտ ենթարկվածություն	**101,131**	**-**	**57,958**	**9,406**

Հաշվետու ամսաթվի դրությամբ և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում միջին փոխարժեքները՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հրապարակած արժութային շուկաներում ձևավորած միջին փոխարժեքները, ներկայացված են ստորև.

	Միջին փոխարժեքներ		**Հաշվետու ամսաթվի փոխարժեք**	
Դրամով	**2021թ.**	**2020թ.**	**31.12.2021թ.**	**31.12.2020թ.**
1 ԱՄՆ դոլար	503.81	489.20	480.14	522.59
1 Եվրո	596.65	558.39	542.61	641.11

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է շահույթ հարկումից հետո ցուցանիշի զգայունությունը հաշվետու ամսաթվի դրությամբ գործող արտարժույթի փոխարժեքների ուժեղացման դեպքում: Արտարժութային փոխարժեքների թուլացումը կհանգեցնի հակառակ էֆեկտի:

Հազար դրամ	**31.12.2021թ.**		**31.12.2020թ.**	
	Ազդեցությունը		**Ազդեցությունը**	
	Շահույթի վրա	**Սեփական կապիտալի վրա**	**Շահույթի վրա**	**Սեփական կապիտալի վրա**
USD ուժեղացում 10%-ով	-	-	941	941
EUR ուժեղացում 10%-ով	10,113	10,113	5,796	5,796

բ) Տոկոսադրույքային ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդում են ուղղակիորեն փոխառությունների և փոխատվությունների վրա՝ փոփոխելով դրանց իրական արժեքը (ֆիքսված տոկոսադրույքով գործիք) կամ դրանց ապագա դրամական հոսքերը (փոփոխական տոկոսադրույքով գործիք):

Հիմնադրամի գործունեության բնույթից ելնելով՝ Հիմնադրամը նշված ռիսկին որևէ նշանակալի ենթարկվածություն չունի:

21. Վարձակալություն

Վարձակալությունները վերաբերում են Հիմնադրամի կողմից վարձակալված ավտոմեքենաներին: 2021թ. ընթացքում որպես ծախս ճանաչված նվազագույն վարձավճարների մեծությունը կազմել է 752 հազար դրամ (2020թ.՝ 778 հազար դրամ): Հիմնադրամը չունի պայմանական վարձավճարներ, չեղյալ չհայտարարվող վարձակալական հանձնառություններ:

22. Իրական արժեքի գնահատում

Իրական արժեքների գնահատման նպատակն է ստանալ մոտավոր այն գումարը, որը կստացվի շուկայի

մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվի վաճառքից կամ կվճարվի պարտավորությունների փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ: 31 դեկտեմբերի 2021թ. դրությամբ Հիմնադրամի կենսաբանական ակտիվները չափվել են իրական արժեքով: Իրական արժեքի հիերարխիայի մակարդակը բացահայտված է Ծանոթ. 2.2-ում և Ծանոթ. 8-ում:

Ղեկավարության կարծիքով, ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքները մոտավորապես հավասար են իրենց իրական արժեքներին:

23. Պայմանական դեպքեր

23.1. Ապահովագրություն

Ապահովագրությունը ՀՀ-ում համեմատաբար նոր է և դեռ զարգացման փուլում է գտնվում, և ապահովագրության շատ ձևեր դեռ հասանելի չեն: Հիմնադրամն ամբողջովին ապահովագրված չէ իր գործունեության ընդհատման կամ էական կրճատման համար, երրորդ անձանց հանդեպ հնարավոր պարտավորությունների գծով՝ կապված հնարավոր միջադեպերի արդյունքում գույքային, բնապահպանական կամ առողջական վնասների հետ: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ապահովագրական պաշտպանություն ձեռք չի բերել, առկա է ռիսկ, որ որոշ ակտիվների վնասումը կամ պարտավորությունների առաջացումը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

23.2. Հարկային անորոշություններ

Հարկային համակարգը ՀՀ-ում աչքի է ընկնում օրենսդրական հաճախակի փոփոխություններով, պաշտոնական պարզաբանումներով, որոնք երբեմն անհստակ են, հակասական կամ տարընթերցումների տեղիք տվող: Հարկային մարմինները կարող են ստուգել Հիմնադրամի հարկային հաշվարկներն ու հայտարարագրերը և իրավունք ունեն տույժ-տուգանքներ նշանակելու:

Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Հիմնադրամի ղեկավարությունը վստահ է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության, հարկային հարաբերություններ կարգավորող այլ իրավական ակտերի՝ իր մեկնաբանության վրա:

23.3. Դատական գործեր

31 դեկտեմբերի 2021թ. դրությամբ Հիմնադրամը ներգրավված չի եղել այնպիսի դատական գործերում, որոնք կարող են Հիմնադրամի համար առաջացնել լրացուցիչ պարտավորություններ (այդ թվում՝ պայմանական):

23.4. Երաշխավորություններ

31 դեկտեմբերի 2021թ. դրությամբ Հիմնադրամը տրամադրած կամ ստացված երաշխավորություններ չի ունեցել:

Գործադիր տնօրեն Ջինսարի Փափելյանի կողմից լիազորված անձ՝ Կոորդինատոր	«ՔԵՅԷՍՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ լիազոր ներկայացուցիչ՝ Գլխավոր հաշվապահի պարտականությունները կատարող
Ռուզաննա Առուստամյան	Նարինե Հակոբյան

30 հունիսի 2022թ.

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 01.07.2022 18:16